Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-789[2]-15.05.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 201.3-*201.5*-րդ հոդվածներով.

« Հոդված 201.3. Թափոնների անձնագրերը չհամաձայնեցնելը

Թափոններ առաջացնողների կողմից կազմված *վտանգավոր* թափոնների անձնագրերը բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի հետ չհամաձայնեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

Հոդված 201.4. Թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկը չներկայացնելը

Թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկը բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին սահմանված կարգով չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

Հոդված 201.5. Թափոնների գոյացման, վերամշակման եւ օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվություն չներկայացնելը

Թափոնների գոյացման, վերամշակման եւ օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվություն սահմանված կարգով չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 242-րդ հոդվածի «201.1-րդ, 201.2-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «201.1 - *201.5*-րդ հոդվածներով» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ <<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
1.Վարդան Այվազյան Միքայել Մելքումյան Միեր Շահգելդյան	1. Անհրաժեշտ է օրենքի նախագծի 201.3 հոդվածը շարադրել տարբերակված:	Ընդունվել է:	Օրենքի նախագծի 201.3 հոդվածի դիսպոզիցիան <<թափոնների անձնագրերը>> բառերից առաջ լրացվել է <<վտանգավոր>> բառով:
2. Վարդան Այվազյան	2. 1-ին հոդվածում նշված է, որ օրենսգիրքը լրացվում է 201.3-201.6 հոդվածներով սակայն փաստացի կատարվել է 201.3-201.5 հոդվածներով,	Ընդունվել է:	Օրենքի նախագծի 1-ին հոդսվածում և 2-րդ հոդվածում <<6>> թիվը փոխարինվել է <<5>> թվով: